24.10.97

Ереван

ՄՇԱԿՈՒՅԹ

Կոչնակ
ՈՒՐԲԱԹ 24.10.97

Ռուդոլֆ Խաչատրյանի «բազմաշափ օբյեկտները»

Դիմանկարային գեղանկարչությունը դարեր շարունակ փոխել է իր բնույթը՝ դեմքի եւ հոգու դասական ներդաշնակությունից դիտակետը փոխադրելով անհատական արտահայտչամիջոցների վրա, որն ավելի շուտ զրկված է այդ ներդաշնակությունից: «Խզման» կուլտուրայի փորձը, հանուն զուտ արտահայտչականության ձեւախեղումը կոչված էին առավել սրությամբ արտահայտելու նկարչի ադրումները: Բնավորության նման «փոփոխականության» էր ենթարկվել հենց իսկ Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունը, ում «բազմաշափ օբյեկտները», որոնք այժմ ցուցադրվում են Հայաստանի ազգային պատկերասրահի դահլիճներից մեկում, միանգամայն գեղարվեստական նոր հայտնություն են, որոնք կտրուկ տարբերվում են նրանցից, որոնց հանրությունն արդեն հասցրել է ընտելանալ [ընկալման բնական համոզչականությունը ոգեւորող դիմանկարներ]: Միայն այդ նկարների աշխարհը խորասուզվելով, կողմնորոշվելով նրանց զուգահեռականներում, կարելի է հասկանալ, թե ինչի մասին են դրանք:

- Նկարիչը չի կարող ամբողջ կյանքում իր ոճը որոնել: Ոճը, ինչպես բնավորությունը, ավելի է ճշգրտվում, կատարելագործվում... Ձեր «բազմաշափ օբյեկտները» «գոչի փորձե՞ր» են, թե՞ ինչ-որ ավարտուն իրողություններ:

- Ոճի իմաստով այդ կտավներն ինձ համար այնքան էլ նոր չեն: Ես նման մի բան փորձել եմ 60-ականներին, տարածության մեջ փորձարկում էի «բաց ձեւերը», ինչպես դա իմ ուսուցիչը՝ Երվանդ Քոչարն էր անում. նրա «գեղանկարչությունը տարածության մեջ» ցնցել էր ինձ նոր, անկանխատեսելի հնարավորություններով: Մի անգամ, երբ մասստրոն իր «օբյեկտներն» էր ցուցադրում, դիմեց ինձ. «Դու դեռ կանդրադառնաս դրան, բայց՝ քո ճանապարհով»: Ես 30 տարի է, որ զգում եմ դեռ «բազմաշափ օբյեկտները» եւ հասա այն բանին, որ դրանք եռաչափ աշխարհում նոր հարթության վրա տեղափոխվեցին:





- Ձեր նկարներում մոր եւ նորածնի կերպարն այնպես է պատկերվում, որ թվում է, թե երկուսի մանրամասները միմյանց են ձուլվում՝ փոխակերպվելով երկակի միակերպարի...

- Մայրն ու մանուկը, որպես մեկը մյուսի շարունակություն. հենց դա է մարդու մասին իմ բանաձեւը, իմ փիլիսոփայությունը: Ամբողջ կյանքում մենք մեր մեջ ենք կրում մանկությունը: Ո՛չ ժամանակը, ո՛չ հանգամանքները ի զորու չեն մեր մեջ սպանելու երեխային: Եվ պատահական չէ, որ բնությունն այնպես է ստեղծել, որպեսզի տարիք առնելով՝ մարդը սկսի երեխայի նմանվել: Այստեղ կկամենայի զուգահեռներ անցկացնել հայկական ճարտարապետության հետ: Նկատե՞լ եք, օրինակ, թե ինչ-ոիսի կոմպոզիցիայով է կառուցված Հռիփսիմեի տաճարը: Ինքնըստինքյան այդ կառույցն ամբողջական եւ ավարտուն է: Սակայն ավելի ուշ նրան ամրացված փոքրիկ, փոքր- ինչ անհամաչափ զանգակատունը ոչ թե խաթարել է ընդհանուր տպավորությունը, այլ ընդհակառակը՝ այդ կառույցին հաղորդել է ավարտունության հատուկ վիճակ: Նույն բանը աշխատանքների հետ է կատարվում. երբեմն ոլաստիկ հակադրությունները մեծ ամբողջականություն են հաղորդում՝ հավասարակշռելով ամբողջ լարվածությունը, բանաստեղծական կարգը:

- Պետք է ենթադրել, որ այդ հակադրությունն արդարանում է նաեւ նրանով, երբ այնոիսի կերպարներ են հայտնվում, որոնք իրենց մեջ տղամարդկային ու կանացի սկիզբներն են համադրում:

- Անդրոգինային կերպարներն իրենց մեջ դիցաբանական նախահիմքեր են կրում: Եթե հիշում եք, առասպելի համաձայն, որը Պլատոնի երեւակայությամբ էր ստեղծվել, մեր նախնիները 2 երես, 4 ձեռք եւ 4 ոտք են ունեցել. նրանք անդրոգիներ էին, այսինքն՝ հերմոֆրոդիտներ: Զեւսը, ցանկանալով վրեժ լուծել մարդկանցից անհնազանդության եւ մեծամտության համար, նրանց երկու կեսի է բաժանում, եւ այդ ժամանակից ի վեր մի կեսը դատապարտված է որոնելու երկրորդ կեսին... Իմ աշխատանքներում ես միացրել եմ այդ կեսերը եւ ստեղծել իմ նոր դիցաբանությունը՝ այն մեր ժամանակաշրջանին հասցեագրելով: Արվեստն էլ հենց դիցաբանություն է: Նրա ուժն այն բանում է, որպեսզի երեւակայականի ու իրականի դիցաբանական միաձուլվածության երանգը պահպանի:

- Ցուցադրանքում կարելի է տեսնել նաեւ մի քանի դանդաղ պտտվող արձանի: Սեւեռուն կոչողականությամբ նրանք կրկնում են կտավների կերպարներին՝ քանդակագործական հյուսվածք ստանալով: Բայց այդ պարագայում նրանք գոյություն են ունենում իրենց ինքնուրույն հատուկ նշանակությամբ: Ինչի՞ հաշվին է դա կատարվում:

- Դրանք հայելային նմանակներ են, որոնք միմյանց կրկնում են Ֆիգուրների կոնտուրներով եւ հարթությամբ, դրանով իսկ ստեղծելով չորրորդ չափումը: Ինձ համար անսպասելի էր, երբ հանկարծ հայտնաբերեցի, որ այդ Ֆիգուրների հայելային միացումն իրենց հիմքում խաչ նշանակեցին [չէ՞ որ մեր ամբողջ հայկական ճարտարապետության հիմքը խաչակերպ է]: Այսպես հայտնվեցին պտտվող սվաստիկանման Ֆիգուրները՝ հիշեցնելով հավերժության նշանը հին հայկական խորաքանդակների վրա:

- Կա՞ արդյոք որեւէ բան ձեր ստեղծագործության մեջ, մասնստրո, որը ձեզ դուր չի գալիս:

- Առայժմ այն ամենը, ինչ ունեմ, ինձ դուր է գալիս: Ճիշտ է, չհաշված այն դիմանկարները, որ նկարել եմ ոչ թե սրտով, այլ պատվերով: Սովորաբար, եթե ինձ աշխատանքներից որեւէ մեկը դուր չի գալիս, ես անմիջապես ոչնչացնում եմ: Այսպես՝ Լոնդոնում, ուր ես շուրջ 5 տարի ապրել եմ՝ ստեղծելով իմ «բազմաշափ օբյեկտները», 1000-ից 200-ը ոչնչացրի: Հետո, երբ դիտում էի սլայդներն ու լուսանկարները, զղջում էի կատարվածի համար: Բայց պարզվում է՝ որոշեակա քննադատությունն ինձ համար որոշիչ է:

- Յուցահանդեսի բացման օրը ինձ թվաց, որ կային նաեւ մարդիկ, ովքեր հույս ունեին տեսնել ռեալիստական շրջանի ձեր դիմանկարները, կային նաեւ հիասթափվածներ... Հավանաբար, նախկին աշխատանքները հասանելի եւ սիրելի էին հասարակությանը...

- Ոչինչ չես անի: Ես երբեք հենց այնպես ոչինչ չեմ անում: Ես փոփոխական եմ. դա ես ես եմ: Այն ամենը, ինչ վերաբերում է մոսկովյան ռեալիստական ժամանակաշրջանին, ես ծախսել- վերջացրել եմ. այն ամենը, ինչ ես կարող էի ասել բնական պատկերավորությամբ, արդեն ասել եմ: Ռեալիստական դիմանկարները շարունակելը կնշանակի ինքս ինձ նմանվել: Այսօր իմ հոգին արդեն այլ չափումների մեջ է: Ես նոր հնարքներ ունեմ, եւ անհամբերությամբ սպասում եմ, թե երբ իմ գաղափարներն ամբողջությամբ կիրականանան:

ԿԱՐԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

Երաժիշտներն ընդդեմ դիրիժորի

Պանդարյանի ժողդատարանում, վերջապես, երեկ կայացավ Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբից վտարված երաժիշտների հայ-

չէր կարող առանց ստույգ իմանալու այդքան լրագրողներ հրավիրել: Դատարանի դահլիճում նստած էին ոստիկաններ, ինչպես նաեւ դատավոր Ռ. Ավետիսյանը: Դատավարությունը սկսվեց ուշացումով: Դատավորը հրավիրեց դատավարությանը մասնակցող անձանց՝ ներկայանալ: Ներկայացան ինքնագնացի հանդիսացող Ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Ռ. Ֆեդոսեեւը, նրա փաստաբան Ս. Ավետիսյանը, ինքնագնացի հանդիսացող Ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար Ս. Ալեքսանյանը, ինքնագնացի հանդիսացող Ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր ջութակահ